ՀԱՎԱՏՔ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ենովքը ապրեց 365 տարի ու մահացավ: Նա քայլեց հավատքով ամեն օր: Նա Ճանաչված էր որպես հավատքի մարդ: Տարին ունի 365 օր և Աստծուն հաճելի է այն անձը ով հավատքով է քայլում ամեն օր Աստծո հետ:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԵԲՐ. 11:1-3, 5-6

1 Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը՝ եւ չերեւեցող բաների ապացոյցն է:
2 Որովհետեւ նորանով առաջինները վկայություն ընդունեցին: 3 Հավատքով ենք իմանում, որ աշխարհքներն Աստուծո խօսքով հաստատվեցին, որ ստեղծվեցին՝ անտեսանելի բաներից տեսանելի դառնալով:

Եբր. 11:7 - Հաւատքով Նոյը պատգամ առնելով դեռ չերեւացած բաների համար եւ երկիւղած լինելով շինեց տապանը իր տան փրկութեան համար...

*5 Հավատով Ենովքը փոխադրվեց երկինք, որ մահ չտեսնի. եւ նա ոչ մի տեղ չգտնվեց, քանի որ Աստուած նրան տարել էր: Եւ նախքան իր տարուելը, **նրան վկայություն էր տրվել,** որ ինքը հաճելի էր Աստծուն: 6 Բայց առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ նա, ով մոտենում է Աստծուն, պէտք է հավատա, որ Աստուած կա եւ վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտռում են իրեն:*

1. ՀԱՎԱՏՔԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ Է, ՄԻՆՉԴԵՌ ՀՈՒՅՍԸ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ Է:

Հռ. 8:24-25 – բայց այն հույսը, որ տեսանելի է, հույս չէ, քանի որ այն, ինչ որևէ մեկը տեսնում է, էլ ինչպե՞ս կհուսա: Սակայն եթե ինչ որ չենք տեսնում, նրա՛ հույսն ունենք, ապա համբերությամբ սպասում ենք:

*Ծննդ. 5:23-24 - 23 Եւ Ենովքի բոլոր օրերը երեք հարիւր վաթսունեւհինգ տարի եղաւ: 24 Եւ Ենովքը Աստուծո հետ վարուեցաւ **(քայլեց),** եւ չէր գտնվում, որովհետեւ Աստուած առաւ նորան: **(Ծախմատի օրինակը)***

2. ՀԱՎԱՏՔԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է (ՔԱՅԼ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ:

- ***Աստվածաշունչն օգտագործում է «քայլել» բառը՝ նկարագրելու համար Աստծո հետ մարդու ընկերակցությունն ու հնազանդությունը:*** *(Աբրահամ Աստծո ընկեր կոչվեց)*

Եբր. 11:8 – Հավատով Աբրահամը հնազանդվեց, երբ կանչվեց գնալու այն տեղը, որն իբրև ժառանգություն էր ստանալու: Նա ելավ գնաց՝ առանց իմանալու, թե ո՞ւր է գնում:

3. ԻՍԿ ՈՐՏԵՂԻՑ Է ԳԱԼԻՍ ՀԱՎԱՏՔԸ:

3 Հավատքով ենք իմանում, որ աշխարհքներն Աստուծո խօսքով հաստատվեցին...

Հռ. 10:17 - Ուրեմն հավատքը լսելուց է, եւ լսելը՝ Աստուծո (Քրիստոսի) խօսքից:

Մատթեոս 9:28-30 – Երբ տուն հասավ, կոյրերը մոտեցան նրան: Յիսուսը նրանց ասաց. Հավատո՞ւմ եք, որ կարող եմ դա անել: Նրան ասացին. Այո՛, Տե՛ր: Այդ ժամանակ դիպավ նրանց աչքերին ու ասաց. Թող ըստ ձեր հավատքի լինի ձեզ: Եվ նրանց աչքերը բացվեցին:

2 Կոր. 5:7-8 - Որովհետեւ հավատքով ենք քայլում, եւ ոչ թէ երեւոյթով:

Հով. 20:25, 28-29 – 25 Աշակերտները նրան ասացին. Տիրոջը տեսանք: Իսկ նա նրանց ասաց. Եթե նրա ձեռքերի վրա մեխերի նշանը չտեսնեմ ու իմ մատը մեխերի տեղերը չդնեմ և իմ ձեռքը նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա:

28 Թովմասը պատասխանեց ու ասաց նրան. Դու իմ Տերն ես և իմ Աստվածը: Յիսուսը նրան ասաց. Հավատացիր, քանի որ տեսար ինձ. երանի՜ նրանց, ովքեր կհավատան առանց տեսնելու:

1 Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը՝ եւ չերեւեցող բաների ապացոյցն է:

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՐՑԸ. Ո՞ՒՐ Է ՁԵՐ ՀԱՎԱՏՔԸ (ՂՈՒԿԱՍ 8:22-25):

4. ՀԱՎԱՏՔԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ:

- ***Աշխարհի կործանման և Քրիստոսի երկրորդ գալուստյան մասին:***

  Յուդա 1:14-15 - Ենովքն էլ, որ եօթներորդն է Ադամից, սորանց համար մարգարէացավ եւ ասեց. Ահա Տէրը եկավ իր բյուրավոր սուրբերով (1 Թես. 3:13):

- ***Ենովքը ճշմարիտ Եկեղեցու խորհրդանիշն է: Ենովքը քայլեց Աստծո հետ, և Նա Յափշտակվեց:***

5. ՀԱՎԱՏՔԸ ԵՐԿՐԱՅԻՆ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՉԷ:

Եբր. 11:13 – Սրանք բոլորը հավատի մեջ մեռան՝ առանց խոստումներն ստանալու: Բայց հեռվից տեսնում էին դրանք, ողջունում ու խոստովանում էին, որ երկրի վրա օտարներ ու պանդուխտներ են:

Եբր. 12:2 – Նայենք հավատի զորագլխին ու այն կատարողին՝ Յիսուսին...

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՅՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: